ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ը <<Կրթության բարելավում>> ծրագրի շրջանակներում հանրակրթական առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման նպատակով հայտարարում է խորհրդատուի ընտրության մրցույթ: Ընտրված խորհրդատուն կղեկավարի <<Օտար լեզուներ>> աշխատանքային խմբի աշխատանքները՝ վերանայելու տվյալ ոլորտի առարկայական չափորոշիչները և ծրագրերը: Մասնավորապես, տվյալ խորհրդատվական ծառայությունը ներառում է հետևյալ աշխատանքները.

1. Ուսումնասիրել՝
   - Կրթության մասին ՀՀ օրենսդրությունը, հանրակրթության պետական չափորոշիչը (ՀՀ կառավարության 8 ապրիլի 2010 թվականի N439-Ն որոշում), ՀՀ որակավորումների ազգային շրջանակը (7 հուլիսի 2016 թվականի N 714 – Ն ՀՀ կառավարության որոշում), հանրակրթության (1-12 դասարաններ) առարկայական չափորոշիչները և ծրագրերը, ներառյալ 10-12-րդ դասարաններում հոսքային ուսուցման ծրագրերը,
   - Հանրակրթության պետական չափորոշչի, առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայման կարիքների գնահատման հետազոտության հաշվետվությունը,
   - Ազգային կրթակարգի նախագիծը,
   - ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից մշակված հայեցակարգային փաստաթղթերը,
   - Հանրակրթության որակի վերաբերյալ այլ հաշվետվությունները
2. Ներգրավել հանրակրթական պետական չափորոշչի վերանայմանը, որը կընդգրկի հետևյալ գործողությունները՝
- Ուսումնասիրել ներկայումս գործող հանրակրթական պետական չափորոշիչը, ազգային կրթակարգը, ներառական կրթության չափորոշիչները, այլ փաստաթղթեր,
- Պարզաբանել հանրակրթության առջև ծառացած հիմնախնդիրները կապված չափորոշիչների և առարկայական ծրագրերի հետ,
- Ներկայացնել հանրակրթության պետական չափորոշչի նախագիծը՝ ներառելով բոլոր անհրաժեշտ բաղադրիչները:
3. Մասնակցել նշված ոլորտի աշխատանքային խմբի անդամների ընտրության գործընթացին,
4. Կազմակերպել առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերանայումը,
5. Կազմակերպել աշխատանքային խմբի հանդիպումները,
6. Հանձնարարել առաջադրանքներ աշխատանքային խմբի անդամներին,
7. Խմբագրել և վերանայել աշխատանքային խմբի կողմից մշակված փաստաթղթերը,
8. Մասնակցել սեմինարների, հանդիպումների՝ ներկայացնելով և քննարկելով կատարված աշխատանքները և վերանայված փաստաթղթերը,
9. Մասնակցել վերանայված առարկայական չափորոշիչների և ծրագրերի մասնագիտական և հանրային քննարկումներին,
10. Պատասխանատու լինել վերանայված առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերջնական տարբերակի համար,
11. Կազմակերպել առարկայական չափորոշիչների և ծրագրերի վերապատրաստման մոդուլների մշակումը
12. Կազմակերպել փորձնական դպրոցներում ուսուցիչների վերապատրաստումը՝ փորձարկելու համար վերանայված առարկայական չափորոշիչները և ծրագրերը,
13. Իրականացնել մոնիտորինգի այցեր փորձնական դպրոցներում և ամփոփել արդյունքները,
14. Մասնակցել փորձնական դպրոցների ուսուցիչների հետ կազմակերպված հանդիպումներին,
15. Իրականացնել վերապատրաստողների վերապատրաստում՝ ներկայացնելու առարկայական չափորոշիչները և ծրագրերը դպրոցներում,

16. Իրականացնել տեղեկատվական սեմինարներ դասագրքեր մշակողների համար:

Նկարագրված աշխատանքները նախատեսվում է իրականացնել 2019թ. հուլիսից մինչև 2021թ. առաջին կիսամյակ ընկած ժամանակահատվածում:

Դիմող թեկնածուները պետք է բավարարեն փորձի և որակավորման հետևյալ պայմաններին.

- Թեկնածուի ընդհանուր որակավորումը.
  - բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում
  - գիտամանկավարժական հետազոտությունների իրականացման փորձ

- Թեկնածուի ընդհանուր փորձը
  - առնվազն տաս տարվա մասնագիտական աշխատանքային փորձ
  - լավ ղեկավարի և կազմակերպչի հմտություններ
  - գերազանց հաղորդակցելու, ներկայացնելու և բանակցելու հմտություններ
- Թեկնածուի հատուկ փորձը
  - Կրթական ծրագրերի մշակման/իրականացման փորձ
  - Կրթության զարգացմանը և ուսումնական ծրագրերի բարեփոխումներին ուղղված միջազգային փորձի և ժամանակակից միտումների լավ իմացություն
  - կրթական չափորոշիչների, ծրագրերի և/կամ թեստերի մշակման ուղղությամբ նախկին փորձությունը կդիտվի որպես առավելություն

Թեկնածուների գնահատումը կիրականացվի հետևյալ կերպ.
- ընդհանուր որակավորումը– 30 միավոր
- ընդհանուր փորձը - 30 միավոր
- հատուկ փորձը - 40 միավոր

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.
- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունը՝ անուն, ազգանուն, ծննդյան թիվ, կրթություն, մասնագիտացում, աշխատանքային փորձ:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ՝ ք. Երևան, Ս. Վրացյան փող. 73 հասցեով, կամ էլ. փոստով (info@cfep.am) մինչև հուլիսի 4, 2019թ., ժամը 17:00-ն: Խնդրում ենք նամակի մեջ նշել պաշտոնը: Այն թեկնածուները, որոնք դիմել են 2019թ. ապրիլի 19-ին հայտարարված <<Լեզուներ>> աշխատանքային խմբի ղեկավարի պաշտոնի համար, կարող են կրկնակի չդիմել, նրանց հայտերը կդիտարկվեն նաև սույն մրցույթի շրջանակներում:
Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոնշյալ հասցեով կամ 57-56-90 (24) հեռախոսահամարով: